ուանը Միացեալ Հայաստանի ատիճանական իրականացման: Ապա թէ կարող է հետեւիլ քեմալական Տաճկաստանի կողմից գրաւուած անդրկովկասեան գաւառների, իսկ վերջին մի-այն արեւմտեան Հայաստանի այս կամ այն — երկու պայմաններում էլ հայաթափուր — երկրամասի կցումը:

Կրկնում ենք: Երբ առաջադրւում է քաղաքական այս ծրագիրը, այդ դեռ չէ նշանակում, թէ նրա իրագործումը համարւում է կարճ ժամանակուան խնդիր: Բնաւ երբեք: Մենք չէ, որ այսչափ փորձերից եւ փորձառութիւններից յետոյ իսկ, մեր ոտքի տակից պիտի սահեցնենք իրական հողը ու ցնորքների ետեւից վազենք:

Աւելին. այս չէ նշանակում, թէ անդամ եթէ վաղը փոխուի քաղաքական դրութիւնը մեր հայրենիքում եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը նորէն իշխանութեան գլուխ անցնի, նա բոլոր պայմաններում պիտի հետապնդի անյապաղ կամ շուտափոյթ իրականացումը Միացեալ Հայաստանի:

Այսպէս դատել, կը նշանակէ հրաժարիլ, մի կողմից, քաղաքական շիտակ ուղեղից եւ ամբոխավարութիւնը չփոթել քաղաքականութեան հետ, միւս կողմից էլ՝ չունենալ սեփական ոյժերի գիտակցութիւնը:

Եւ, եթէ մենք քննադատում ենք հայ բոլշեւիկների եւ նրանց կուրօրէն հետեւող հայ քաղքենի տարրերի քաղաքականութիւնը՝ այդ անում ենք ոչ թէ նրա համար, որ նրանք այսօր, տուեալ պայմաններում գոհացում չեն տալիս եւ կամ չեն կարողանում գոհացում տալ հայ ժողովրդի հողային արդար պահանջներին, այլ նրա համար, որ նրանք առհասարակ ուրանում են նման պահանջի գոյութիւնն անդամ, ժխտում են Հայաստանի սահմանների ընդարձակման անհրաժեշտութիւնը, բուռն պայքար են մղում Միացեալ Հայաստանի գաղափարի դէմ իսկ, հռչակելով այն որպէս աշխարհակալական եւ արկածախնդրական:

Ուրիշ խօսքով՝ մեր եւ մեր հակառակորդների էական տարբերութիւնը սկզբունքային է, մեր ներհակութիւնը հետապնդած խէալի եւ խէալների շուրջն է: Մեր եւ, — որ նոյնն է — սեփական հայրենիքի ամբողջացումը իրեն ի-տէալ դծած հայ ժողովուրդի — խէալն է, որ ուրացւում է եւ արհամարհւում: Եւ քանի կայ, շարունակւում է այս մտայնութեանց միջեւ գոյութիւն ունեցող վիհը, անկարելի է նաեւ՝ կամրջել նրանց:

IV

Ցնո՞րք է, պատրա՞նք է ամբողջական Հայաստանի գաղափարը:

Մենք ոչինչ չունինք բոլոր նրանց դէմ, որոնք անկեղծօրէն եւ սեփական դատողութեամբ հասած են նման եզրակացութեան: Բայց այդպիսիներից պահանջելու իրաւունքը ունինք մենք, որ նրանք չուրանան այն փաստը, թէ այդ գաղափարը խորապէս իւրացրել է հայ ժողովուրդը եւ յամառօրէն հետապնդում է նրա իրականացումը:

Եւ ո՞վ է, ո՞ր ազգն է, որ այսօր չէ ձգտում իր հատուածների եւ իր հողերի հաւաքման ու ամբողջացման: Եւ մի՞թէ քիչ են նրանք, որ արդէն իսկ իրականացրել են այդ իտէալը:

Շատ չէ, ընդամէնը 10–15 տարի առաջ բուրժուական աշխարհակալութիւն, արկածախնդրութիւն, յետամնացութիւն եւ ազգայնականութիւն էր որակւում Եւրոպայի շատ ընկերվարականների — էլ չեմ ասում աւելի արմատական տարրերի — կողմից ազգահաւաքման ամէն մի ծրագիր: Եւ նրանց հետեւելով էլ՝ մեր տնաբոյս մարքսիստները — բոլշեւիկ թէ մենշեւիկ, միեւնոյնն է, բայց նաեւ՝ ոչ-մարքսիստ էսէրներ եւ ուրիշներ դեռ քսան տարի առաջ «պանարմենիզմ» որակելով խարանում էին հայութեան եւ հայ հայրենիքի հաւաքման ու ամբողջացման բոլոր փորձերը, որ այն ժամանակ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեան տակ իրենց դրեթէ սկզբնաւորութեան մէջ էին գտնւում: Նրանք յետադէմ, բուրժուական, աշխարհակալական էին անուանում մեր ժողովրդական խաւերի ազգային ամենառողջ ձգտումը՝ հաւաքուելու եւ ամփոփուելու սեփական յարկի տակ, միացեալ ոյժերով նուիրուելու հայրենիքի զարգացման մեծ գործին:

Դեռ այսօր էլ պատկերը հիմնովին չէ փոխուել, թէեւ, այնուամենայնիւ, ազգային